

## Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

### ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիտարկվում են գեղարվեստական թարգմանության առանձնահատկությունները հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ մարմնի մասերի անվանումներով ձևավորված դարձվածքների փաստական նյութի հիման վրա: Ներկայացվում են դարձվածքների թարգմանության հիմնական եղանակները և համարժեք դարձվածքների տեսակները, ինչպես նաև թարգմանչին ներկայացվող պահանջները՝ գրագետ և բարձրարժեք թարգմանություն կատարելու համար:

**Առանցքային բաներ.** թարգմանություն, առանձնահատկություն, եղանակ, համարժեք, դարձվածք, պատճենում, բառացի, նկարագրական:

Թարգմանությունը, ինչպես նշում է Ջ. Բորոուն, լավագույն դեպքում բնագրի արձագանքն է: Այն ստեղծագործության ձև է, որը մի լեզվով ստեղծված աշխատանքը վերաստեղծում է մեկ այլ լեզվով: Թարգմանվել կարող են ինչպես գեղարվեստական երկերը, այնպես և գիտատեխնիկական գրականությունը, հրապարակախոսական նյութերը և այլևայլ աշխատանքները:

Գեղարվեստական թարգմանության խնդիրը խոսքի գեղարվեստական բովանդակության վերարտադրումն է՝ նկատի ունենալով հեղինակի ստեղծագործական անհատականությունը: Տեքստի թարգմանության համար թարգմանիչը պետք է ճշգրիտ կերպով հաղորդի օտարալեզու տեքստի բովանդակությունն այնպես, որ թարգմանելի տեքստի լեզուն և ոճը հնարավորինս համապատասխանի թիրախ լեզվի լեզվաոճական առանձնահատկություններին: Գեղարվեստական երկի ճիշտ և գեղեցիկ թարգմանության համար բավարար չէ միայն թիրախ և թարգմանելի լեզուների լեզվական իրողությունների (քերականություն, բառապաշար և այլն) իմացությունը: Այստեղ կարևորվում է նաև տեքստում տեղ գտած ազատ և կայուն բառակապակցություններին և դարձվածքներին տիրապետումը, դրանք ճիշտ իմաստով և ոճով թարգմանելը:

Սույն հոդվածում դիտարկվում են դարձվածքների թարգմանության առանձնահատկությունները հայերենի, ռուսերենի և անգլերենի մարմնի մասերի անվանումներ պարունակող դարձվածքների փաստական նյութի հիման վրա:

Նախ նշենք, որ ամենից առաջ դարձվածքները թարգմանվում են նույն լեզվի ներսում: Դրանք լեզվական այն միավորներն են, որոնք ունեն բառային հոմանիշներ և, լեզվում առավելապես ստանալով ոճական արժեք, օգտագործվում են մտքի գեղեցիկ արտահայտման, պատկերավորման, իմաստի սաստ-

կացման համար (**ձեռք-ոտք տեսնել**- զուգել, զարդարել, **երեսի ջուր** – ամոթ, պատիվ) [1]: Սրան հակառակ, ցանկացած լեզվում գոյություն ունեն նաև այնպեսի դարձվածքներ, որոնք հնարավոր չէ թարգմանել: Դրանք բացատրվում են միայն նկարագրական եղանակով՝ **սևը ներսն անել, կարմիրը՝ դուրս** -վիշտը ցույց չտալ:

Դարձվածաբանների մեծ մասն առանձնացնում է դարձվածքների թարգմանության չորս հիմնական եղանակ: Առաջին եղանակը դարձվածքի թարգմանությունն է դարձվածային համարժեքով, որի դեպքում պահպանվում է թարգմանվող միավորի իմաստային ամբողջությունը: Համարժեք դարձվածքները ունեն միևնույն կազմը, քերականական և ոճական նույնպիսի առանձնահատկություններ դիտարկվող մեկ, երկու կամ երեք լեզվում, միաժամանակ օժտված լինելով նույն իմաստով, նույնիսկ նույն նրբիմաստով, մի հանգամանք, որ նպաստում է նրանց կայունությանը: Սա հնարավորություն է ընձեռում առավել լրիվ վերարտադրել այլալեզու դարձվածքը, ինչպես, օրինակ՝ **ոտքերի վրա հազիվ կանգնել – едва на ногах стоять, գլուխը կորցնել – терять голову – lose one's head, սիրտը նվաճել – покорять сердце – win sb's heart, մեջք ծռել – гнуть спину, կրնկի տակ – под пяткой – under sb's heel, սիրտը բացել – открыть сердце – open one's heart, գլուխը պտտեցնել – кружить голову – turn sb's head**, և այլն:

Ինչպես նկատում ենք, բերված դարձվածքներում համընկնում են թե բերված պատկերները, թե բառային կազմերն ու քերականական ձևերը:

Համարժեք դարձվածքների շարքում հանդիպում են նաև այնպիսիք, որոնք տարբեր են իրենց քերականական առանձնահատկություններով՝ **մատները լպսպել – пальчики оближешь, սրտից քար ընկնել – камень с сердца свалился, գլուխը հաստ – a thick headed thing, մազը մազից ջոկել – split hairs, սիրտը դողալ – сердце дрогнуло** և այլն:

Տարբեր լեզուներում իմաստային առումով համարժեք դարձվածքային միավորների առաջացումն ու գործածվելը բացատրվում է այդ լեզուները կրող ժողովուրդների ընդհանուր պատկերացումներով և առնչություններով, մի հանգամանք, որն իր հերթին պայմանավորված է շրջապատող իրողությունների ընդհանրությամբ: Ինքնին հասկանալի է, որ համարժեք դարձվածքների լավ իմացությունը կնպաստի բարձրարժեք թարգմանություն կատարելուն [2]:

Հարկ է նշել սակայն, որ անհրաժեշտ է հաշվի առնել երկու հանգամանք, որոնք սահմանափակում են համարժեք դարձվածքների օգտագործման հնարավորությունը: Առաջին, դարձվածային համարժեքներն անհամեմատ քիչ են.

Դրանք հաճախ երկու լեզուներում գոյություն ունեցող այն դարձվածքներն են, որոնք փոխանցվել են մեկ այլ՝ երրորդ լեզվից (հունարենից կամ լատիներենից), Աստվածաշնչից կամ դիցաբանությունից, որոնք պատկանում են հնդեվրոպական լեզուների ընդհանուր դարձվածքային ֆոնդին: Սրանց շարքին են դասվում նաև մարմնի մասերի անվանումներով ձևավորված որոշ դարձվածքներ, օրինակ՝ **Աքիլլեսյան գարշապար** – *Ахиллесова пята* – *Achilles heel*, **ձեռքերը լվանալ** – *умывать руки* – *wash one's hands*, **սիրող սրտի համար խրճիթը պալատ է** – *for a love-united heart a hayloft is a palace*, **կրծքի վրա օձ տաքացնել** – *призреть змею на зруди* – *cherish a serpent on one's bosom*, **քիթն ընկնել** – *бросаться в нос* և այլն:

Դարձվածքների մեջ հանդիպում են այնպիսիք, որոնք մասամբ են համարժեք, որոնք ունեն նույն իմաստը, սակայն տարբերվում են մեկ-երկու բաղադրիչով, քերականական և ոճական առանձնահատկություններով, օրինակ՝ **աչքի լույսի պես պահպանել** – *беречь как зеницу ока* – *cherish as the apple of one's eye*, **ձեռքը բերանը հասնել** – *live from hand to mouth*, **պարապ գլխում չար մտքեր են ծնվում** – *на безделье всякая дурь в голову лезет* – *an idel brain is the devil's workshop*, և այլն:

Բերված դարձվածքների իմաստային կառուցվածքը դիտարկվող լեզուներում բնորոշվում է դենոտատիվ և կոնոտատիվ իմաստների նույնատեսակ հարաբերակցությամբ, այսինքն, դարձվածքների իմաստները նույն չափով առնչվում են օբյեկտիվ իրականության առարկաների պատկերներին [3]:

Երեք լեզուներում հանդիպում են նաև այնպիսի համարժեք դարձնածքներ, որոնք թեև տարբեր են բառային կազմով և կառուցվածքով, սակայն արտահայտում են նույն իմաստը, ստեղծում նույն փոխաբերական պատկերը, ինչպես, օրինակ՝ **թույլ երակը գտնել** – *find the length of sb's foot*, **թիկունք չունենալ** – *not to have a leg to stand on*, **երես փվինք՝ աստառ ուզեց** – *let him put in his finger and he will put in his whole head*, **ոտաց փեղ էրեց՝ գլուխն էլ գուզե**, **գլխիցդ վեր գործ մի բռնիր** – *no одежке протягивай ножки* – *stretch your arm no further than your sleeve will reach*, **լեղին ճաքել** – *сердце ушло*, **сердце ушло в пятаку** – *one's heart leaped into one's mouth, with one's tail between one's legs*, **փորումը սիրտ չմնալ**, **ջանը դող ընկնել** և այլն:

Երկրորդ՝ երկու լեզվի կողմից միևնույն դարձվածքի փոխառման դեպքում լեզուներից մեկում նրա իմաստը կարող է փոփոխության ենթարկվել [4]: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կատարել համարժեք դարձվածքների ճիշտ ընտրություն, որը թարգմանչից պահանջում է քաջատեղյակ լինել թարգմանելի

լեզվի դարձվածքների նրբիմաստներին, ոճական և այլ առանձնահատկություններին:

Դարձվածքային համապատասխանության երկրորդ տեսակը Վ.Ն. Կոմիսարովն անվանում է դարձվածային նմանակներ: Սրանք այն դարձվածքներն են, որոնք օժտված են միևնույն փոխաբերական իմաստով, սակայն հիմնված են այլ պատկերի վրա, օրինակ՝ **մազների միսն ուրել, ջանին ջափա փալ – работатъ не покладая рук – work one’s fingers to the bone, ձեռքին բռնել – catch sb red-handed, a bird in the hand is worth two in the bush – лучше курица в руке, чем журавля в небе**, և այլն:

Այստեղ ևս նկատելի են որոշ սահմանափակումներ, այն է՝ դարձվածքների հուզական և ոճական իմաստի պահպանման դժվարությունը, ինչպես նաև որոշ նմանակ-դարձվածքների ոճական անհամարժեքությունը և ազգային երանգավորումը: Ընդ որում, ազգային երանգավորում ունեցող դարձվածքները հարկ է թարգմանել այնպիսի միավորներով, որոնք զուրկ են ազգային երանգից:

Դարձվածքների թարգմանության երրորդ՝ բառացի թարգմանության, այսինքն պատճենման եղանակը կարող է կիրառվել այն դեպքում, երբ պատճենման արդյունքում ստացվում է մի կապակցություն, որը հեշտությամբ ընկալվում է թարգմանելի լեզուն կրող ժողովրդի կողմից և չի ստեղծում անբնականության և խորթության տպավորություն: Պատճենում-համապատասխանությունները հնարավորություն են ընձեռում պահպանել բնագիր միավորի պատկերավոր կառուցվածքը, ինչպես նաև հաղթահարել այն դժվարությունները, որոնք առաջանում են, երբ բնագրում պատկերն օգտագործվում է ծավալուն՝ ընդարձակ փոխաբերություն ստեղծելու նպատակով: Սակայն բառացի թարգմանության ժամանակ անհրաժեշտ է չխախտել հասկանալիության չափանիշը: Այդ բառապատճենումները հիմնականում փոխառություններ են այլ լեզուներից և բավականին հազվադեպ են, լինելով մեկ ժողովրդի հոգեբանության և պատկերացումների արդյունք, դժվարությամբ են յուրացվում այլ ժողովուրդների կողմից:

Տարբեր լեզուներում կան նաև այնպիսի դարձվածքներ, որոնց իմաստային կառուցվածքը չի հարաբերակցվում մյուս լեզուների որոշակի միավորների հետ՝ սրանով հանդերձ ձևավորելով դարձվածային լակունաներ՝ բացթողումներ: Այս դեպքում, տվյալ դարձվածքը մյուս լեզվում թարգմանվում է չորրորդ՝ բացատրական-նկարագրական եղանակով՝ **a skeleton in the cupboard – ընփանեկան գաղտնիք, գլուխը թաս կոխել – заставлять – force, продавать глаза – stand in silence, արյունը քսել մեկի դռանը – to blame sb unfairly, ухо девки/парень – խարդախ, խորամանկ աղջիկ/փղա – a fraudulent/crafty girl-/boy**:

Ներկայացնենք որոշ հատվածներ գեղարվեստական գրականությունից և նրանց թարգմանությունները՝ վերը նշված մեթոդներով:

«...Մի օր Հեղնարի **երեսով չտաս**. Ես էլ խոսք եմ տալիս, որ նրան **մատով շանց տալու** կնիկ շինեմ քեզ համար, նա բարի աղջիկ ա, նա ինքը էս բանումը մեղավոր չի. Ես ու դուն ըլնեինք նրա տեղակ, ավելի վատթարը կանեինք. մի կողմիցն էր լպստված տղեն ա **գլխահան անում**, մեկել կողմիցը մեր **Աստծուծերիցն էլած** աղջկերքն են խեղճին **քամի տալիս** ու **կոնատակը ձմերուկ դնում**, ի՞նչ ա՛ թե **խելքը փչեն**, որն իր տեգորը, որն իր ախպորը, մեկելը քեռու տղի վրա **սիրտը տաքացնեն**» (Պոռշյան, Հացի խնդիր, էջ 406):

“... Не упрекай Эхнар. И даю тебе слово, что я сделаю ее для тебя примерной женой, она добрая девушка и не так уж виновата. Будь мы на ее месте и не то бы сделали. Этот наглец **сбивает ее с толку**, а бесстыдницы подруги льстят ей и смущают ее, желая сосватать кто за брата, кто за деверя” (П. Прошян, Из-за хлеба, М., 1950, с. 64, Анна Иоанисян).

«Ես ի՞նչ անեմ, խի՞ չի **իր ոտն իր կարպետով մեկնում**» (Պոռշյան, Հացի խնդիր, էջ 380):

“А мне-то что? Пусть по одежке протягивает ножки” (П. Прошян, Из-за хлеба, М., 1950 с. 64, Анна Иоанисян).

She will have no heed of me, and my **heart will break** (Oscar Wilde, Fairy Tales. M. 1979, p. 40).

Նա ինձ չի էլ նկատի և իմ սիրտն այդ վշտին չի դիմանա (Օսկար Ուայլդ, Հեքիաթներ, էջ 92, Երևան, 1980, Գազիկ Հախվերդյան):

And the Giant’s **heart melted** as he looked out (Oscar Wilde, Fairy Tales. M. 1979, p. 50).

Ու հսկայի **սիրտը հալվեց** այս տեսարանից (Օսկար Ուայլդ, Հեքիաթներ, էջ 100, Երևան, 1980, Գազիկ Հախվերդյան):

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը **լեզու է առնում** (Թումանյան Հովի. Երկերի լիակատար ժողովածու, հատոր 5, 1994, էջ 186):

Suddenly the fish spoke to him in a human voice (Hovhannes Tumanyan, Selected works, M. 1969, p. 437).

Բայց Լուսիկի **սիրտը որ կտրե՞նք**, հետո ի՞նչ անենք (Թումանյան Հովի. Երկերի լիակատար ժողովածու, հատոր 5, 1994, էջ 202):

But if we **break** Lusig’s **heart** we shall find it hard to make a new one (Hovhannes Tumanyan, Selected works, M. 1969, p. 166).

### **Եզրակացություն.**

1. Դարձվածքների թարգմանության ամենաօպտիմալ եղանակը թիրախ լեզվի դարձվածքի թարգմանությունն է թարգմանելի լեզվի համարժեք դարձվածքով, չնայած այն հանգամանքին, որ հիշյալ դարձվածքների քանակը սահմանափակ է:

2. Համարժեք դարձվածքների բացակայության դեպքում, բնագիր լեզվի դարձվածքը հնարավոր է թարգմանել թարգմանելի լեզվի նմանակ-դարձվածքով, եթե նույնիսկ այն ձևավորված է այլ բառապատկերային հիմքով: Այս դեպքում դարձնածքների ոճական կամ հուզական երանգը միշտ չէ, որ համընկնում է, ուստի և փոխարինումն անհնար է:

3. Պատճենումը կամ բառացի թարգմանությունը երբեմն թույլատրելի եղանակ է, սակայն ոչ միշտ է արդյունավետ:

4. Եթե թիրախ լեզվի դարձվածքի համար թարգմանելի լեզվում հնարավոր չէ գտնել համապատասխան համարժեք դարձվածք, ապա անհրաժեշտ է կատարել նկարագրական թարգմանություն:

Դարձվածքների ճիշտ թարգմանությունը գեղարվեստական երկի հաջող և գեղեցիկ թարգմանության գրավականներից է, որը թարգմանչից պահանջում է լավատեղյակ լինել թիրախ և թարգմանելի լեզուների դարձվածքների իմաստներին և նրբիմաստներին, քերականական և ոճական առանձնահատկություններին:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. **Գևորգյան Ե.** Հայերենի դարձվածքները: Երևանի պետհամալսարանի հատարակչություն.- Երևան, 1969. - 39 էջ:
2. **Ղազարյան Հ.** Հայերենի, ռուսերենի և անգլերենի համարժեք դարձվածքները // Կանթեղ (գիտական հոդվածներ). - Երևան:Ասորիկ հրատարակչություն, 2013.- 4 (57).- էջ 94:
3. **Алефиренко Н.Ф.** Некоторые аспекты сопоставительно-семантического анализа фразеологизмов русского и украинского языков. – Воронеж, 1977. - 28с.
4. **Комиссаров В.Н.** Современное переводоведение.- М., 1982. - 51 с.

**Ա.Յ. ԿԱԶԱՐՅԱՆ**

## **ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДА ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ**

Рассматриваются особенности художественного перевода на фактическом материале армянских, русских и английских фразеологических единиц, образованных с компонентами частей тела. Представлены способы перевода фразеологизмов, типы эквивалентных единиц, а также требования, предъявляемые к переводчику, для выполнения правильного и высокохудожественного перевода.

**Ключевые слова:** перевод, особенность, способ, эквивалент, фразеологизм, калькирование, дословный, описательный.

**H.Z. GHAZARYAN**

## **PECULIARITIES OF TRANSLATION OF PHRASEOLOGICAL UNITS**

The peculiarities of literary translation on the actual material of Armenian, Russian and English phraseological units formed with the components of body parts are considered. The ways of translating phraseological units, types of equivalent units, as well as the requirements set to the translator to perform the correct and highly artistic translation are presented.

**Keywords:** translation, peculiarity, method, equivalent, phraseology, calquing, literal, descriptive.

ՀՏԴ 81'366.5

**Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

## **ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հայերենի՝ առաջնալեզվային բաղաձայնների հերթագայությամբ մի շարք արմատների ստուգաբանական վերլուծությունը ծագումնաբանական փնջերով հնարավորություն է ընձեռում ստուգաբանելու հայերենի անհայտ ծագման բազմաթիվ արմատներ: Ներկա աշխատանքում ներկայացված են այդ արմատներից մի քանիսը՝ հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուների համարժեքներով:

**Առանցքային բառեր.** առաջնալեզվային բաղաձայններ, ծագումնաբանական փնջեր, անհայտ ծագման արմատներ, հնդեվրոպական լեզուներ, ֆիննաուգրական լեզուներ:

Հայտնի է, որ հայերենը հնդեվրոպական ամենաառեղծվածային լեզուներից մեկն է, «թերևս ամենաառեղծվածայինը կենդանի լեզուների մեջ», ինչպես նշել է ակադ. Գ. Զահուկյանը [1,62]: